



# ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՎԸ ՀԱՅՈՑ

Ա.Մ. ՆԱՐԱՆԳՆԵՐՈՒ ԱՐԵՒՄՏԵԱՆ ԹԵՍԻ

WESTERN PRELACY

OF THE ARMENIAN APOSTOLIC CHURCH OF AMERICA

H.E. ARCHBISHOP MOUSHEGH MARDIROSSIAN, PRELATE

Tel: 818-248-7737/8, Fax: 818-248-7745

E-mail: [Prelacy@aol.com](mailto:Prelacy@aol.com) Website: [www.westernprelacy.org](http://www.westernprelacy.org)



## ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐԲԱՉԱՆԸ ՊԻՏԻ ՀԱՆԴԻՍԱՊԵՏԸ ՍՈՆԹԵՊԵԼԼՈՅԻ Ս. ԽԱԶ ՄԱՅՐ ՏԱճԱՐԻ Ս. ՊԱՏԱՐԱԳԻՆ

Կիրակի, 20 Յունիսին, թեմիս բարեխնամ Առաջնորդ Բարձր. S. Մուշեղ Արք. Մարտիրոսեան պիտի հանդիսապետէ Սոնթեպելլոյի Ս. Խաչ Մայր Տաճարի Ս. Պատարագին եւ պիտի փոխանցէ օրուան յատուկ պատգամը:

### PRELATE TO PRESIDE OVER DIVINE LITURGY AT HOLY CROSS CATHEDRAL

On Sunday, June 20<sup>th</sup>, 2010, H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, will preside over Divine Liturgy at Holy Cross Cathedral in Montebello, and deliver the sermon.

\*\*\*

### Ն.Ս.Օ.Տ.Տ. ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ Կ'ԱՅՅԵԼԵ ՔԱՆԱՏԱ

Մեծի Տան Կիլիկիոյ Կաթողիկոսութեան տեղեկատուութեան գրասենեակը կը հաղորդէ, որ Ս. Աթոռոյս գահակալ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոս 15 Յունիսին ուղղուած է Քանատա, ուր յատուկ հրաւերով պիտի մասնակցի G8ի միջ-կրօնական խորհրդաժողովին (25-ին 28 Յունիս) ու անոր օրակարգի պատրաստութեան նիստերուն (20-ին 23 Յունիս):

Օրակարգի նիւթերը կ'ընդգրկեն տնտեսական, խաղաղութեան ու կենսոլորտի հարցեր: Պիտի մասնակցին շուրջ հարիւր բարձրաստիճան կրօնական առաջնորդներ: Ժողովներուն, Վեհափառին կ'ընկերանան թերասի թեմի Առաջնորդ Բարձր. S. Մեպուհ Արք. Սարգիսեան, Քանատայի թեմի Առաջնորդ Բարձր. S. Խաժակ Արք. Յակոբեան եւ տեղեկատուութեան բաժանմունքի վարիչ Յոգէ. S. Գրիգոր Շ. Վրդ. Զիթթեան:

Քանատա իր կեցութեան առիթով, Վեհափառ Յայրապետը պիտի ըլլայ ևաեւ Քանատայի մեր թեմի զաւակներուն հետ: Ան Սոնթեալ կը գտնուի 17-ին 20 Յունիսին, իսկ Թորոնթօ՝ 23-ին 27 Յունիսին: Սոնթեալի

հանգրուանին, Վեհափառի շքախումբին կը միանայ Արեւելեան Թեմի Առաջնորդ Բարձր. S. Օշական Արք. Զօլոյեան, իսկ Թորոնթոյի հանգրուանին՝ Թեմին բարեխնամ Առաջնորդ Բարձր. S. Մուշեղ Արք. Մարտիրոսեան:

## PONTIFICAL VISIT OF H.H. CATHOLICOS ARAM I TO CANADA



The Communications Office of the Catholicosate of Cilicia reports that on June 15<sup>th</sup>, 2010, H.H. Catholicos Aram I departed for Canada to participate in the G8 religious summit, which will be held from June 25<sup>th</sup> to the 28<sup>th</sup>.

Over one hundred high level clergy will participate in the summit, during which a wide range of issues will be discussed. His Holiness is accompanied by Prelate of Tehran H.E. Archbishop Sebouh Sarkissian, Prelate of Canada H.E. Archbishop Khajag Hagopian, and Catholicosate Communications Officer Very Rev. Fr. Krikor Chiftjian.

During his stay in Canada, His Holiness will meet with the faithful of the Canada Prelacy. He will be in Montreal from June 17<sup>th</sup> to the 20<sup>th</sup>, and in Toronto from the 23<sup>rd</sup> to the 27<sup>th</sup>. Prelate of the Eastern U.S. H.E. Archbishop Oshagan Choloyan will join His Holiness in Montreal, and H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, will join His Holiness in Toronto.

\*\*\*

## Ս. ՊԱՏԱՐԱԳ ԱՉԳ. ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆԻ ՄԱՏՐԱՆ ԱՆՈՒԱՆԿՈՉՈՒԹԵԱՆ ՏՕՆԻՆ ԱՌԹԻՒ

Քայաստանեայց Առաքելական Եկեղեցւոյ տօնացոյցին համաձայն, Շաբաթ, 26 Յունիսը տօնն է Քայաստան աշխարհի առաջին քրիստոնեայ թագաւորին ու թագուհիին՝ Ս. Տրդատի եւ Ս. Աշխենի, որ միաժամանակ անուանակոչութեան տօնն է Ազգ. Առաջնորդարանի «Ս. Տրդատ եւ Ս. Աշխեն» մատրան:

Ազգ. Առաջնորդարանին մեջ ամսական յաճախակիութեամբ Ս. Պատարագը բացառաբար տեղի պիտի ունենայ Յունիսի չորրորդ Շաբաթ

օրը, 26 Յունիսին, Երեկոյեան ժամը 6-ին, տօնախմբելու համար մատրան անուանակոչութիւնը:

Ս. Պատարագը պիտի մատուցան եւ պիտի քարոզէ Գերա. Տ. Միռոն Ծ. Վրդ. Ազնիկեան:

## **DIVINE LITURGY IN CELEBRATION OF THE NAME DAY OF THE PRELACY CHAPEL**

In accordance with the Armenian Church calendar, the Feast of St. Dertad and St. Ashkhen, the first Christian king and queen of Armenia, will be observed on Saturday, June 26<sup>th</sup>. The feast is also the name day of the Prelacy “St. Dertad and St. Ashkhen” Chapel, and will be celebrated with Divine Liturgy on Saturday the 26<sup>th</sup>, at 6:00 p.m.

Very Rev. Fr. Muron Aznikian will celebrate the Liturgy and deliver the sermon.

\*\*\*

## **ԴԱՒԹԵԱՆ-ՄԱՐԻԱՄԵԱՆ ԿՐԹԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹԵԱՆ ԱՍՎԿԵՐՁԻ ՀԱՆԴԵՍՆԵՐ**

Դաւթեան-Մարիամեան Կրթական Հաստատութեան ամավերջի հանդեսներու ծիրին մեջ, յայտնենք որ, Առաջնորդ Սրբազն Յօր տևորինումով, Թեմիս հոգեւոր հայրերը յաջորդաբար ներկայ Եղան շրջաններուն մեջ տեղի ունեցած հանդեսներուն:

Նշենք, որ Դաւթեան Մարիամեան Կրթական Հաստատութեան հայերեն ծրագրի շրջանաւարտներու կեղրոնական հանդիսութիւնը տեղի պիտի ունենայ Շաբաթ, 19 Յունիսին, Կլենտելի Pacific Community Center-ին մեջ:

Առաջնորդ Սրբազն Յայրը ներկայ պիտի ըլլայ հանդեսին եւ պիտի փոխանցէ իր օրինութիւններն ու բարեմաղթութիւնները:

Առաջնորդ Սրբազն Յօր պիտի ընկերանայ Արք. Տ. Կոմիտաս Քիև. Թորոսնեան: Ներկայ պիտի ըլլայ նաեւ Ազգային Վարչութեան անդամ՝ Տիար Կարեն Բենեասեան:

## **DAVIDIAN & MARIAMIAN EDUCATIONAL FOUNDATION COMMENCEMENT CEREMONIES**

As the 2009-2010 school year comes to a close, commencement ceremonies have already begun and will continue in the coming weeks. The Prelate and/or clergy members have been attending the ceremonies of Prelacy Schools, as well as receptions in honor of Armenian students in public schools.

On Saturday, June 19<sup>th</sup>, 2010, the graduation ceremony of the Davidian and Mariamian Educational Foundation will take place at the Pacific Community Center in Glendale.

The Prelate will attend the graduation and convey his blessings and message to the students. He will be accompanied by Rev. Fr. Gomidas Torossian. Executive Council member Mr. Kahren Beniasian will also be in attendance.

\*\*\*

## ՓԱՍԱՏԻՆԱՅԻ ՊԵՏԱԿԱՆ ՎԱՐԺԱՐԱՆՆԵՐԵ ԾՐՁԱՆԱՐՏՆԵՐՈՒ Ի ՊԱՏԻ



Հովանաւորութեամբ ու Ներկայութեամբ Առաջնորդ Սրբազան Յօր, Զորեքաբթի, 16 Յունիսի Երեկոյեան, Փասատինայի Յայ Կեդրոսին մէջ տեղի ունեցաւ Փասատինայի Պետական Երկրորդական Վարժարաններու հայ շրջանաւարտներու գլահատանքի հանդիսութիւնը:

21-րդ տարին ըլլալով, ձեռնարկը կազմակերպուած էր Փասատինայի Ս. Սարգիս Յայաստանեայց Առաքելական Եկեղեցոյ հովիւն եւ հոգաբարձութեան կողմէ: Ներկայ էին Եկեղեցոյ Երեսփոխաններ, Տիկնանց Միութեան անդամներ, շրջանի Յ.Յ.Դ. «Լեռնավայր» Կոմիտեի եւ Փասատինա շրջանի կազմակերպութիւններու եւ միութիւններու Ներկայացուցիչներ, Pasadena Unified School District-ի Ներկայացուցիչներ, տնօրիններ, ուսուցիչներ, աշակերտներ եւ ծնողներ:

Ս. Սարգիս Եկեղեցոյ հոգեւոր հովիւն՝ Արք. Տ. Խորեն Քինյ. Պապօշեան կատարեց սեղաններու օրինութիւնը:

Առաջնորդ Սրբազան Յայրը շնորհաւորեց շրջանաւարտները, նորանոր յաջողութիւններ մաղթեց անոնց՝ իրենց ուսումնական յաջորդ աշխատանքներուն մէջ,

Եւ փոխանցեց գլահատանքի եւ օրինութեան իր խօսքը:

Առաջնորդ Սրբազան Յօր կ'ընկերանար Յոգ. Տ. Պարթեւ Վրդ. Կիւիւմեան:

Գեղարուեստական յայտագիրի բաժինը ճոխացաւ հայկական ժողովրդական պարերով, զորս կատարեց Համազգայինի «Շահան Շահնուր» մասնաճիւղի պարախումբը:

Յաջողակ աշակերտներ արժանացան շրջանի Յ.Ե.Դ. «Նիկոլ Դուման» Ուխտի եւ Սեփէթճեան կրթանասուներուն: Կատարուեցաւ շրջանաւարտներու Ներկայացում, գնահատագրերու, շնորհաւորագիրներու եւ յուշանուերներու տուչութիւն:

Հոգէ. Տ. Պարթեւ Վրդ. Կիւլիւմեանի աղօթքով ձեռնարկը հասաւ իր աւարտին:

## **PRELATE CONGRATULATES ARMENIAN GRADUATES FROM THE PASADENA SCHOOL DISTRICT**



On Wednesday, June 16<sup>th</sup>, 2010, the 21<sup>st</sup> annual appreciation night in honor of Armenian graduates from the Pasadena School District took place at the Pasadena Armenian Center. The reception is organized each year by the Pastor and Board of Trustees of St. Sarkis Church.

In attendance were church delegates, Ladies

Auxiliary members, representatives from the local ARF "Lernavayr" Gomideh and sister organizations, Pasadena School District members, principals, educators, and parents.

The evening began with the invocation by parish pastor Rev. Fr. Khoren Baboochian.

The Prelate was then invited to convey his blessings and deliver his message to the students.

During the reception students were presented with scholarships, certificates of commendation, and mementos. There was also a cultural program presented by the Hamazkayin "Shahan Shahnour" chapter dance group.

The evening came to a close with the benediction by Very Rev. Fr. Barthev Gulumian.

\*\*\*

**ԱՌԱՋՆՈՐԴ ՄՐԲԱՉԱՆԸ ԸՆԴՈՒՆԵՑ  
ԳՐԱԳԵՏ ՏՈՔԹ. ԲԱՐԳԵՆ ԲԱԼԵԱՆ-ՏԵՐ ՅԱԿՈԲԵԱՆԻ  
ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆԸ**

Չորեքշաբթի, 16 Յունիսի կեսօրին, Թեմիս բարեխնամ Առաջնորդ Բարձր. S. Մուշեղ Արք. Սարտիրոսեան ընդունեց վաստակաշատ գրող ու մտաւորական Տոքթ. Բարգել Բալեան-Տեր Յակոբեանի այցելութիւնը:

Իր եղբօր՝ Տոքթ. Չարեհ Պալեանի ընկերակցութեամբ, Տոքթ. Բարգել Պալեան Ազգ. Առաջնորդարան Եկած էր, Առաջնորդ Սրբազնական Նուիրելու

իր ու տիկնոց՝ Սեդայի հրատարակած գիրքերն օրինակներ: Ան նաեւ խորհրդանշական այլ յուշանուեր մը բերած էր Առաջնորդ Սրբազնական՝ իր հրատարակած յօդուածներն պատառիկներով կազմուած «պատառ» մը (տեսնել լուսանկարը), ուր տեղ գտած եին մեր մայրենին ու հայ կնոց նուիրուած գրութիւններ: Պաստառին մէջ տեղ գրաւած պատառիկներն ամենն ուշագրաւը՝ մեր լեզուին մասին հայ թէ օտար գրողներու եւ մտաւորականներու կարծիքներու եւ ներբողականներու հաւաքածոյ մըն է, որուն իրաքանչիր պարբերութիւնը ուժեղ պատգամ մը կը փոխանցէ ընթերցողին, մասաւանդ մեր նորահաս սերունդներուն:

Ծնորիիւ Տոքթ. Բ. Պալեանի գուարթախոհութեան ու հաղորդականութեան, անսմիջապէս ստեղծուեցաւ մտերմիկ ու շերմ մթնոլորտ: Խօսակցութիւնը ընդգրկեց հայութիւնը յուզող հարցեր, ինչպէս նաեւ իրանահայ գաղութին ստեղծած հայկական ժառանգութիւնները, տրուած ըլլալով, որ հիւրերը եղած են իրանահայ մեր գաղութի անդամներէն:

Քրածեշտի պահուն, Առաջնորդ Սրբազնը շնորհակալութիւն յայտնեց նուերներուն համար ու իր կարգին, յուշանուերներ յանձնեց յարգելի հիւրերուն:

## PRELATE WELCOMES SCHOLAR BABKEN BALIAN-TER HACOPIAN



On Wednesday, June 16<sup>th</sup>, 2010, H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, welcomed scholar Dr. Babken Balian-Ter Hacopian to the Prelacy. Dr. Balian-Ter

Hacopian, who was accompanied by his brother Dr. Zareh Balian, had come to present the Prelate with several books authored by himself and his wife, Mrs. Seta. Dr. Balian-Ter Hacopian also presented a memento, a poster made of segments from various articles he has written over the years.

The Prelate and guests discussed a number of issues from concerns facing the Armenian community, to the contributions and legacy of Iranian-Armenians to the Armenian nation, given that the guests hail from Iran.

At the conclusion of the meeting the Prelate thanked the guests for the gifts and for their visit, and presented them with mementos as well.

\*\*\*